

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Յ Խ Ա Կ Ա Ն Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ Ո Յ

Ե Ռ

ԻՐ ՅԱՆՉՍԱՍՈՒՄԲԵՐՈՒ

1976 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Գ Ո Ր Ե Ո Ւ Ն Է Ո Ւ Թ Ե Ա Ն Ց

ՅՈՒԹԱ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն Ե Ր Կ ա յ ա ց ո ւ ա ծ

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀ. ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Տ Ե Ղ Ի ո ւ ն Ե ց ա ծ

ԿԻՐԱԿԻ, 27 ՓԵՏՐՈՒՄ 1977

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ  
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՆԿԵՂԵՑԻ  
Մ Ո Ն Թ Ր Է Ա Լ

Հ Ր Ա Ռ Է Ր

ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ

Մոնթրեալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Առաք.  
Նկեղեցւոյ ճիւղի Խորհուրդը այսու կուգայ Ձեզ հրաւիրել Տա-  
րեկան Անդամական Ընդհ. ժողովի, որ պիտի գումարուի

Կիրակի, 27 Փետրուար 1977 ժամը 15-ին

Նկեղեցւոյս «Գարիպեան» Սրահին մէջ

Իւրաքանչիւր տրատու անդամի պարտականութիւնն է ներկայ  
գտնուիլ սոյն կարեւոր անդամական ժողովին, որուն օրակարգի  
նիւթերն են հետեւեալները:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ  
-----

- 1) Աղօթք եւ բացում
- 2) Ընտրութիւն օրուան դիւանի
- 3) Ընթերցում նախորդ ընդհ. ժողովի ատենագրութեան
- 4) Անդրադարձում նիւթա-բարոյական տեղեկատուութեանց
- 5) Գարտքի Շիջման մարմնի վերակազմութիւն
- 6) Ընտրութիւն ճիւղի Խորհուրդոյ 5 անդամներու
- 7) Ընտրութիւն հաշուեքննիչ մարմնի
- 8) Ընտրութիւն ընտրողական մարմնի
- 9) Թելադրութիւններ եւ զանազանք

Յ.Գ. Իւրաքանչիւր տրատու անդամ կարենալ մասնակցելու համար  
այս ընդհ. ժողովին, պարտի գէշ վերջին երկու տարուան  
անդամատուրքերը վճարած ըլլալ:

\*

\* \*

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԵԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ

ԳՈՐԵՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ

1976 ՏԱՐԵՇՐԱՆԻ

Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ ծխական Խորհուրդը 1976 տարեշրջանի իր անդրանիկ ժողովը զումարեց Մարտ 17, 1976-ին եւ դիւանը կազմեց հետեւեալ կերպով.

- Պրն. Լեւոն ԳՈՐԵՅԱՆ ~ Ատենապետ
- Պրն. ԱՐԹՕ ՊԱՄՄԱՃԵԱՆ ~ Փոխ ատենապետ
- ՏՈՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՋՈՒՄԱՆԵԱՆ ~ Ատենաղալիր
- Պրն. ՄԻՍԱԲ ԿՈՒՏՍՈՒՋԵԱՆ ~ Փոխ ատենաղալիր
- Պրն. ԳԷՈՐԳ ՓԵԼՔԵՔԵԱՆ ~ Գանձապահ
- Պրն. ՎԱՀԱԳՆ ԱԶՆԱԽՈՒՐ ~ Հաշուապահ
- ՏՈՔԹ. ՀՐԱՅՐ ՏԷՐ ԳԷՈՐԳԵԱՆ ~ Խորհրդական
- Պրն. ԳՐԻԳՈՐ ՏԻԳՐԱՆԵԱՆ ~ Խորհրդական
- Պրն. ԱԼԵՔՍ ԳՈՒՆԹԷՐԵԱՆ ~ Խորհրդական

1976 տարեշրջանի ընթացքին, Խորհուրդս ունեցաւ 33 լիակատար նիստեր երեք Խորհրդակցական եւ մէկ քացառիկ ժողովներ:

Առաջին հերթին, Խորհուրդս նկատի ունեցաւ Զատկուան զունաւոր հաւկիթներու պատրաստութեան հարցը: Խորհուրդոյս անդամներէն Պրնք. Միսաք Կոտսուզեան եւ Ալեքս Գոլնթէրեանսերտ գործակցութիւն պահելով Եկեղեցւոյ Տիկնանց Միութեան եւ Օժանդակ Տիկնանց Մարմնի կարգ մը անդամներուն հետ, այս տարի եւս յաջողութեամբ պսակեցին աւանդական եւ նոյնժամանակ հասութեամբ ձեռնարկները:

Մարտ ամսուան ընթացքին, հետեւելով Ազգային Առաջնորդարանի թելադրանքին, լիբանանահայերու օժանդակութեան, ծխ. Խորհուրդս գործակցեցաւ տեղւոյս Հ.Բ.Ը.Միութեան Մասնաճիւղին, Գոլսահայ Միութեան եւ Թէքէեան Մշակ. Միութեան, կազմելով յատուկ յանձնախումբ մը, որ աւելիով իրականացուց Մոնթրէալէն ակնկալուած 10,000 տոլարի բաժինը: Այս հանգանակութեան սկիզբը դրուեցաւ, երբ լիբանանահայ ծանօթ բանաստեղծ Պրն. Վահէ Վահեան ընդունուեցաւ սրահիս մէջ:

Այս տարի եւս, Ապրիլ 24-ի յուշատօնը նշուեցաւ Խորհուրդոյս հովանաւորութեամբ, համայնքիս զանազան կազմակերպութիւններու գործակցութեամբ: Եկեղեցւոյ մէջ կատարուած տպաւորիչ յայտագիրէն ետք, անախընթաց յաջողութեամբ „Մարի Մանուկեան“, սրահին մէջ ցուցադրուեցաւ "The Armenian Case" նոր պատրաստուած ժապաւէնը:

Ապրիլ 7-ին, Գանատայի Առաջնորդական Փոխանորդ Գերշ. Տ. Արիս Եպս. Եիրվանեանի նախագահութեամբ՝ Խորհուրդս հանդիպում մը ունեցաւ իր բոլոր մարմիններու ներկայացուցիչներուն հետ, ուր հարցեր եւ ծրագիրներ քննուեցան, եւ թելադրութիւններ կատարուեցան:

Խորհուրդս, նկատի ունենալով անցեալ Տարեկան Անդամական ժողովի ընթացքին եղած առաջարկը, հետամուտ եղաւ կազմելու Եկեղեցւոյ Խնամակալ Մարմին մը, եւ այս պաշտօնին համար հրաւիրեց Տոքթ. Ա. Տէմիրճեանը, Պրն Հ. Միսաքեանը եւ Պրն. Ա. Մարտիկեանը: Խորհրդակցութիւններէ ետք, պատրաստուեցաւ ուղեցոյց-կանոնագիր մը, այս յանձնախումբի աշխատանքի ծիրը բովանդակող: Սակայն, անդամներուն անձնական գործի բերմամբ զբաղւած ծովափնէն եւ վերջապէս քաղաքէն քացակայութիւնը պատճառ եղաւ, որ այս Մարմինը ցարդ գործնական վիճակի մէջ չմտնէ:

Մայիս ամսուան սկզբնաւորութեան, ֆիլատելիոյ մէջ կայացած Ամերիկայի Արեւելեան Թեմի տարեկան Պատգամաւորական ժողովին իրենց դրական մասնակցութիւնը բերին, Եկեղեցւոյս երեք երեսփոխաններու կողքին, Խորհ. Ատեմապետը եւ երկու անդամները: Այս առթիւ, տեսակցութիւն մը տեղի ունեցած է Թեմական Խորհուրդի անդամներուն, Առաջնորդ Սրբազան Հօր եւ Եկեղեցւոր կայացուցիչներուն միջեւ, ուր առաջարկուած է, եւ հետագային Թեմական Խ. կողմէ պաշտօնապէս ընդունուած՝ Թէ Եկեղեցւոյս տարեկան Առաջնորդական վճարելի տուրքը 1976-ի համար պիտի ըլլայ ամսական 600 տուարի հաշուով փոխան 800-ի, այս հասկացողութեամբ Թէ յետեւալ բոլոր տուրքերը անյապաղ պիտի վճարուին: Նոյն ամսուան վերջաւորութեան, կարգադրութեամբ Առաջ. Փոխ. Տ. Արիս Սրբազանի, քաղաքս այցելեցին Հայաստանէն երկու քահանայ հայրեր՝ Տ.Տ. Արամ եւ Արտակ, որոնք Թեմի Պատգամաւորական ժողովին ներկայ գտնուած էին:

Կիրակի, Յունիս 27-ին, Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան Եկեղեցւոյս մէջ կատարեց Հովիւ Հոգշ. Տ. Շնորհք Վրդ. Գասպարեանի ծայրագոյնութեան աստիճանի տուչութիւնը: Յաւարտ Ս. Պատարագի տեղի ունեցաւ մաշկերոյթ, իսկ նոյն երեկոյեան Խորհուրդս բացառիկ ժողով մը գումարեց Առաջնորդ Սրբազան Հօր նախագահութեամբ, ուր քննուեցան Եկեղեցւոյս եւ Գանատայի Փոխանորդութեան հետ կապ ունեցող զանազան հարցեր:

Դարձեալ Յունիս ամսուան ընթացքին, աւարտեցաւ „Հանրի Պուրասսա“, պողոտային վրայ գտնուող ազգապատկան հողին վաճառումը՝ 55,000 տուարի: Այս հողին վրայ եղած 35,000 տուարի Հ.Բ.Ը.Մ. փոխառութիւնը, ըստ Հ.Բ.Ը.Մ.ի Ամերիկայի Շրջանի Կեդրոնական Վարչութեան փափաքին, փոխանցուեցաւ Նիւ Եորքի գրասենեակին:

Հետեւելով Առաջնորդ Սրբազան Հօր Թելադրութիւններուն, Խորհուրդս կազմեց, Լիբանանէն քաղաքս ժամանող ազգակիցներու օգնութեան յանձնախումբ մը, բաղկացած գաղութիս զանազան ազգայիններէն: Այս ուղղութեամբ Եկեղեցւոյս դիւանատունը, բազմաթիւ պարագաներու բերաւ իր օժանդակութիւնը: Ժամանակ մը, Անգլերէն լեզուի դասընթացք եւս կազմակերպուեցաւ նորեկներուն:

Նախորդ տարիներուն նման, այս տարի եւս Խորհուրդս մատակարարեց կալուածի սրահներու վարձելու հարցը հայկական եւ օտար հաստատութիւններու: Տարւոյն ընթացքին Հ.Բ.Ը.Մ.ի Մասնաճիւղը փոխադրուեցաւ իր սեփական շէնքին մէջ, սակայն Սեպտեմբերէն սկսեալ Արմէն-Քէյթը Հ.Բ.Ը.Մ. Ամենօրեայ վարժարանի նախամանկապարտէզի բաժինը, մէկ տարուան համաձայնութեամբ, հաստատուեցաւ Եկեղեցւոյս շէնքէն ներս: „Մարի Մանուկեան“, սրահը շարունակաբար տրամադրուեցաւ Թէքէեան Մշակ. Միութեան Թատերական կամ պարախումբին փորձերուն համար, եւ Ալքոլամոլներու ընկ. շաքար անգամ մը կը շարունակէ օգտագործել „Վաչէ Յովսէփեան“, սրահը, բոլորը փոխան համապատասխան վճարումներու:

Սեպտեմբեր 22-ի իր հերթական նիստին մէջ, Խորհուրդս նկատի առաւ Առաջ Սրբազան Հօր նամակը, որ ընդառաջելով Եկեղեցւոյս Հովիւ Տ. Շնորհք Ժ. Վրդ. Գասպարեանի փափաքին, համաձայն էր Հայր սուրբի պաշտօնով փոխադրութեան Կրինֆիլտ, Ուիսքոնսին համայնքը: Հայր սուրբը Խորհուրդոյս հետ համաձայնաբար որոշեց իր մեկնումի Թուականը՝ Դեկտ. ամսուան սկիզբը: Թէեւ ցարդ պաշտօնական հովիւ մը չէ նշանակուած Եկեղեցւոյս, սակայն, արարողութիւնները անխափան կը շարունակուին, շնորհիւ երկու նուիրեալ հոգեւորականներու՝ Տ.Տ. Սահակ Ա. Քհնյ. Պալեանի եւ Յուսիկ Քհնյ. Նշանեանի:

Նոյեմբեր ամսուան սկիզբը, պատեհութիւնը ունեցանք կրկին անգամ մեր մէջ ընդունելու Կ. Պոլսոյ Պատրիարք Ամեն. Տ. Շնորհք Արք. Գլխուստեանը երեք օրուան համար: Ընդունելութիւն մը սարքուեցաւ ի պատիւ Ամեն. Սրբազան Հօր, քաղաքիս Շերաքըն պանդոկին մէջ, ուր Պատրիարք Հայր պարզեց իր փափաքը մեր համայնքին կողմէ տարեկան 3000 տուարի ակնկալութիւն մը, ի նպաստ Թուրքիոյ գաւառներէն Պոլիս փոխադրուող հայութեան: Խորհուրդս իր պարտքը համարեց Պոլսահայ Միութեան հետ գործակցաբար տարեկան այդ գումարը աւելիով ապահովել:

Հոկտեմբեր 30-ին, եկեղեցւոյս մէջ տեղի ունեցաւ Թեմիս Գանատայի Հայց. Եկեղեցիներու ներկայացուցչական ժողով մը, որուն մասնակցեցան Առաջ. Փոխ. Գերշ. Տ. Արիս Եպս. Շիրվանեան, Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան եւ Թեմական Խորհուրդի ատենապետ դատաւոր ծան նաժարեան: Ամբողջ օր մը տեւող այդ ժողովին ընթացքին մանրամասնօրէն քննուեցան Գանատան առանձին Թեմի վերածելու հարցին զանազան երեսները, հովիւներու պարագան, Փոխանորդութեան պիւտճէն, եւ նոր կազմուելիք Թեմին համար պատրաստուած ծրագիր-կանոնագրէն կարեւոր մասեր:

Այս տարուան եկեղեցւոյս սեփական «Տէպիլթանթ» ներու շքեղ պարահանդէսին աշխատանքները, գլխաւորութեամբ այդ յանձնախումբին ատենապետ Գրն. Երուանդ Շիշմանեանի, սկսան շատ կանուխէն, եւ նախորդ տարիներէ աւելի բըծախնդրութեամբ եւ կազմակերպուած կերպով յառաջ տարուեցան. արդիւնքը եղաւ աննախընթաց յաջողութիւն մը: Այս առթիւ Ճխական Խորհուրդը անգամ մը եւս իր գնահատանքը եւ շնորհակալութիւնը կը փափաքի յայտնել Գրն. Ն. Շիշմանեանին:

Դեկտեմբեր 19-ին, Խորհուրդս յարմար նկատեց Եկեղեցւոյս հովանիին տակ աշխատող բոլոր յանձնախումբերուն իր շնորհակալութիւնը եւ գնահատանքը արտայայտելու, զանոնք պատուելով ճաշկերոյթով մը:

Այս տարի եւս Խորհուրդս պատրաստեց գեղեցիկ պատի օրացոյցը, որ արդէն իսկ մեր համայնքին եւ Թորոնթոյի շրջանին մէջ ցրուած է:

Անցնող տարուան ընթացքին, Թէեւ կարելի չեղաւ մեր մարմիններուն հետ ունենալ հանդիպումներ ծրագրուած յամախականութեամբ, սակայն, Խորհուրդս զործակցեցաւ բոլորին հետ. ոմանց մէջ կարգ մը անդամներ ծխ. Խորհուրդին մաս վերցուցին աշխատանքին, ինչպէս Վարժարանի Խնամակալութեան, « Բուրաստան»ին, Դպրաց Դասին եւ Դարահանդէսի Յանձնախումբերուն մէջ: Մի քանի առանձին հանդիպումներ ունեցանք Երիտասարդաց նորակազմ Յանձնախումբին հետ, ունենալով Գրն. Հայկ Միսաքեանը որպէս խորհրդատու այս Յանձնախումբին:

Այս տարուան ընթացքին Եկեղեցւոյս մէջ կատարուեցան 34 Դսակադրութիւններ, 44 Մկրտութիւններ եւ 25 յուղարկաւորութիւններ:

Այս տեղեկագրութեան պատրաստութեան օրերուն, Ճխական Խորհուրդը լրջօրէն կ'ուսումնասիրէ Մարի Մանուկեան Սրահին յատակը նորոգելու, ինչպէս նաեւ սրահին ձայնային դրութեան, խոհանոցին եւ յարակից բաժիններուն բարելաման միջոցներուն մասին:

Նոյնպէս Առաջնորդ Սրբազան Հօր հետ խորհրդակցութիւններ կը շարունակուին Եկեղեցւոյս հովիւ մը ապահովելու համար: Նաեւ ծխ. Խորհուրդը, իր ներկայացուցիչներով կը շարունակէ իր բաժինը բերել Գանատայի մէջ առանձին Թեմ կազմակերպելու աշխատանքին:

ՏՈՋԹ. Յ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ  
Ատենադպիր  
ԼԵՒՈՆ ԳՈՐԾԵԱՆ  
Ատենապետ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻԶ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ՇԱՐԽՈՐԾԱՅ ՎԱՐՃԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԵՈՒՆԷՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ  
1976 ՏԱՐԵՇՐԶԱՆԻ

Եկեղեցւոյս Նաբաթօրեայ վարժարանը ինչպէս անցեալին, այս տարեշրջա-  
նին եւս կրնձանայ կանոնաւոր կերպով շնորհիւ հոյլ մը նուիրեալ անձե-  
րու: Այս տարեշրջանին, անցնող տարիներու խնամակալութեան ատենապետի  
պաշտօնը ամենայն կանոնաւորութեամբ տանող Դրն. Անդրանիկ Չատրճեան  
իր զբաղումներուն բերումով ստիպուած հեռացաւ սոյն պաշտօնէն: Այս  
տարուան խնամակալութիւնը կը բաղկանայ հետեւեալ անդամներէ.

Տիկ. Արաքսի Ազնաւուր, ՏոքՉ. Յարութիւն Ազնաւուրեան, Դրնք.  
Գէորգ Օելթէքեան, Միսաք Կոլտսուզեան եւ Վահէ ԶէՉլի

Այս տարեշրջանի ուսուցչական կազմը կը բաղկանայ հետեւեալ նուիրեալ  
անձնաւորութիւններէ.

ՕՐ. ՆինԱ ՅԵՐՈՒՆԵԱՆ	՝ Մանկապարտէզ
ՕՐ. ՅԱՍՄԻԿ ՄԱՆԿԱՄԱՐԵԱՆ	՝ Ա. եւ Բ. դասարաններ
ՏԻԿ. ՇՆՈՐՀԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ	՝ Գ. դասարան
ՏԻԿ. ԲԵՏԵՎԱ ԹԱՇԾԵԱՆ	՝ Դ. դասարան
ՏԻԿ. ԱՐԱՋՍԻ ԱԶՆԱՌՈՐ	՝ Տնօրէնուհի եւ Ե. դասարան
ՏԻԿ. ԱՆԱՀԻՏ ԷՎՐԷՍՅԷԼ	՝ Զ. դասարան
ՏԻԿ. ԼԻՒՍԻ ԶԷՅԹԷՔԵԱՆ	՝ Է. դասարան

Ինչպէս նախորդ շրջանին, այս տարի եւս, Արմէն-Զէպէք Հ.Բ.Զ.Մ.  
օթօպիւսները կը կատարեն աշակերտութեան փոխադրութիւնները ամենայն  
կանոնաւորութեամբ:

Անցեալ տարեշրջանին տեղի ունեցաւ վարժարանի խնամակալութեան կազ-  
մակերպած պարանցիկ երեկոյ շրջ, որը արժանազրեց բացառիկ յաջողութիւն:  
Անցնող տարուան ընթացքին եւս, ուսուցչական ներկայացուցչութիւն մը  
մասնակցեցաւ Առաջնորդարանի կազմակերպած տարեկան համագումարին, որ  
տեղի ունեցաւ Մայիսի սկիզբը ֆիլատելիոյ մէջ:

ՊՐՈՒՐԱՍՏԱՆ ԱՄՍԱԹԵՐԹԻ  
ԳՈՐԵՈՒՆԷՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Եկեղեցւոյս ամսաթերթը Պրուրաստան այս տարեշրջանին բոլորեց իր  
12րդ տարին, որ ցարդ լոյս տեսաւ անխափան կերպով:

Պրուրաստան ծխական Խորհուրդոյ կողմէ որոշուած յատուկ յանձնա-  
խումբով մը կը շարունակէ ընթացք տալ իր աշխատութիւններուն, տարուէ  
տարի աւելի բարելաւելով իր բովանդակութիւնը: Յանձնախումբի անդամ-  
ներն են հետեւեալները.

Տիկ. Արաքս Արթիւնեան, ՏոքՉ. Յարութիւն Արզումանեան, Դրն. Նուրհան  
Ուզունեան, Դրն. Գրիգոր Գրլճեան, Դրն. Սերովբէ Գուլումեան, Դրն.  
Միսաք Կոլտսուզեան, Դրն. Գեղամ Շիրվանեան եւ Դրն. Վահէ ԶէՉլի

**Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՑ  
ԵԿԵՂԵՑԱՍՏԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԵԱՆՑ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ  
1976 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ**

1976 տարուան ընթացքին վարչուլթիւնս կը բաղկանար հետեւեալներէ

- |                           |                   |
|---------------------------|-------------------|
| ՏԻԿ. ԵԻՆԻԳԷ ԳԱՐԻԳԵԱՆ      | ՝ Պատուոյ նախագահ |
| ՏԻԿ. ՀԱՅԿՈՒՀԻ ԿՈՒՏՍՈՒՋԵԱՆ | ՝ Ատենապետ        |
| ՏԻԿ. ԱՆԻ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ       | ՝ Փոխ-ատենապետ    |
| ՏԻԿ. ԱՐԱՔՍԻ ԱԶՆԱԽՈՐ       | ՝ Ատենաղպիր       |
| ՏԻԿ. ՇՈՒՇԱՆ ԲՐՈՒՏԵԱՆ      | ՝ Փոխ-ատենաղպիր   |
| ՕՐԴ. ՄԵՐՍԵՏԵՍ ՍԱՐԱՅԵԱՆ    | ՝ Գանձապահ        |
| ՏԻԿ. ՎԵՐԺԻՆ ԺԻՀԱՆԵԱՆ      | ՝ Փոխ-գանձապահ    |
| ՏԻԿ. ԹԱԳՈՒՀԻ ՀԱՆԷՆԵԱՆ     | ՝ Խորհրդական      |
| ՏԻԿ. ԱՐՇԱԿՈՒՀԻ ՄՈՒՐԱՏԵԱՆ  | ՝ Խորհրդական      |
| ՕՐԴ. ԱՐՈՒՍԵԱԿ ՓՕԼԱՏԵԱՆ    | ՝ Խորհրդական      |
| ՕՐԴ. ԻՄԱՍՏՈՒՀԻ ՎԱՐԴԱՆԵԱՆ  | ՝ Խորհրդական      |

Աւելի վերջը սակայն, Օր. Ի. Վարդանեան հեռացաւ անհանգստութեան պատճառաւ:

Անցնող այս տարեշրջանին, ուրախութեամբ կ'արձանագրենք թէ շնորհիւ դիւրահաղորդ նկարագիրներու մեկտեղումին, Միութեանս անդամներուն թիւը հետզհետէ աճելով բարձրացաւ 82-ի: Այս տարեշրջանին, Միութիւնս դժբախտութիւնը ունեցաւ կորսնցնելու իր սիրելի անդամներէն մին, յանձին՝ Այրի Տիկ. Տ. Ալթունեանի:

Ստորեւ կը ներկայացնենք ամփոփ տեղեկատուութիւնը Միութեանս ունեցած գործունէութեանց:

Մեր այս շրջանի գործունէութեանս բացումը կատարուեցաւ խիստ մը շակեալ անդամական, գրեթէ մշակութային ցերեկոյթով մը, ուր անդամներ ունկնդրեցին, պատուասիրուեցան եւ տեղեկ եղան նախորդ շրջանի եւ թէ գալիքին կատարուելիք ձեռնարկներու մասին:

Ապրիլ 3-ին, տեղի ունեցաւ այցելու հիւրերու պատուասիրութիւն:

Ապրիլ 16-ին Գանատայի Առաջ. Փոխ. Սրբազան Հօր ի պատիւ ճաշկերոյթ:

Մայիս 22-ին, Գայրենի հիւր հոգեւորականներու ի պատիւ ճաշկերոյթ:

Սրբուհիներու տօնին օրուան յատուկ ընդունելութիւն մը: Պատուասիրութիւն տարեցներու, յատուկ ճաշկերոյթով եւ յայտագիրով մը: Զբօսապրտոյտի ձեռնարկներ, որոնք բաւական պատասխանատուութիւն եւ յոգնութիւն կը պահանջեն: Երբ ուշադրութիւն դարձնենք Տիկնանցի գործունէութեան, ըլլորին կեդրոնը կը հանդիսանայ ընդհ. առմամբ ճաշերու շուրջ: Հակահակ վարչութեանս գիտակցութեանը, թէ կարելի է նաեւ ունենալ տարբեր տեսակի հետաքրքրութիւններ Եկեղեցւոյ սեմէն ներս, ինչպէս դաստիարակչական, բարեպաշտական, կրթական եւ այլ, սակայն, անկարելիութեան առջեւ կը գտնուի, տրուած ըլլալով որ շատ մը պատճառներ, օրինակի համար կլիմայի, հեռաւորութեան, փոխադրութեան, տարիքի:

Այս անցնող շրջանին, Միութեանս Վարչութիւնը գումարեց 7 անդամական եւ 12 վարչական հերթական ժողովներ:

Վերոյիշեալ գործունէութիւններէն զատ, Միութեանս գլխաւոր ձեռնարկները կը կազմեն Ս. Զատկուան, իրենց փոխանցուած գունաւոր հաւկիթներու եւ կարգ մը ուտեստեղէններու պատրաստութիւնը եւ վաճառումը:

Անկասկած Միութեանս ընդհանուր գործունէութեան առանցքը կը կազմէ տարեկան պագար-տօնավաճառը, որ Եկեղեցւոյս կ'ապահովէ ըստ բաւականի կոկիկ գումար մը, եւ որ Մոնթրէալի հայկական շրջանակներու մէջ կը գտնէ մեծ արժագանգ իր տեսակին մէջ իբրեւ լաւագոյնը:

Այս առիթով, Վարչութիւնս կը փութայ յայտնել իր շնորհակալութիւնները ու զնահատանքը Եկեղեցւոյս հոգեւորականաց դասուն, Պատուարժան ծխական Խորհուրդէն սկսեալ ենթակայ բոլոր մարմիններուն; որոնք ամէն պատեհութեամբ ցոյց կուտան իրենց հոգածութիւնն ու մասնակցութիւնը մեր իւրաքանչիւր ձեռնարկին, մաղթելով բոլորին արեւշատութիւն եւ յաջողութիւններ, որպէսզի իւրաքանչիւր հայ, որ կը ծառայէ իր պատկանելիութեան, կարենայ շարունակել Աստուածահաճոյ եւ ազգահաճոյ իր գործունէութիւնները:

Ի դիմաց Տիկնանց Վարչութեան

Ա. Ազնաւուր  
Ատենադպիր

Հ. Կուտսուզեան  
Ատենապետ

**Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻԶ ԵԿԵՂԵՑԻՈՅ**  
**ԿՈՄԻՏԵԱՍ ԴՊՐԱՑ ԴԱՍՈՒ**  
**ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ**  
**1976 ՏԱՐԵՇՐԶԱՆԻ**

27 Յոլնուար 1976-ին, Դասուս անդամական ընդհ. ժողովի ընտրութեան, վարչութիւնս հետեւեալ կազմով գործի լծուեցաւ:

- |                          |              |
|--------------------------|--------------|
| ՊՐՆ. ՎԱՀԱՆ ՇԱԶԱՐԵԱՆ      | ~ Ատենապետ   |
| ՊՐՆ. ՍՈՒՔԻԱՍ ԳՈՒՄՐՈՒՅԵԱՆ | ~ Ատենադպիր  |
| ՊՐՆ. ԳՐԻԳՈՐ ԳԱՆԱՐ        | ~ Գանձապահ   |
| ՊՐՆ. ՂԱԶԱՐՈՍ ՄԷՐ         | ~ Հաշուապահ  |
| ՊՐՆ. ՎԱՐԴԳԷՍ ՊԱՆԻՐԵԱՆ    | ~ Խորհրդական |
| ՊՐՆ. ԳԵՂԱՄ ՇԻՐՎԱՆԵԱՆ     | ~ Խորհրդական |
| ՊՐՆ. ՔԷՈՐԳ ՓԵԼՔԷՔԵԱՆ     | ~ Խորհրդական |

Նախ յայտնենք, որ դժուար եղաւ թեկնածուներ գտնել վերոյիշեալ պաշտօններուն, նկատի ունենալով տիրող պայմանները: Մենք քաջութիւնը ունեցանք պաշտօնի անցնիլ, յուսալով, որ մեզի զօրավիզ անդամներու օգնութեամբ, այս դժուարին գործը պիտի կրնանք տանիլ, անդամներու միջեւ կրկին ստեղծելով համերաշխութիւնը: Որեւէ տեղէ նեցուկ չունեցանք, այլ աշխատեցանք մեր ոյժերով. ջանացինք անդամներուն միջեւ ներդաշնակութիւնն ու խանդավառութիւնը կրկին ստեղծելու: Կարգ մը անդամներու գանազան պատճառքանութիւնները, ուրիշներու անտարբերութիւնը, նորաբոյս դասակարգի մը ստեղծած դժուարութիւնները, արգելք հանդիսացան ակնկալած աշխատանքներուն:

Հակառակ ասոնց սակայն, Եկեղեցւոյս 5րդ տարեդարձին, խումբս բազմաձայն երգեցողութիւններով, բերաւ իր մասնակցութիւնը, զոր պատարագեց Բարձրաշնորհ Տ. Վաչէ Եպս. Յովսէփեան ի ներկայութեան Գանատայի Առաջ. Ծոխ. Տ. Արիս Եպս. Շիրվանեանի:

Ըստ անկալեալ սովորութեան, Ս. Զատկուայ երգեցողութիւնները բազմաձայնով ներդաշնակօրէն կատարուեցան դեկավարութեամբ Պրն. Գեղամ Շիրվանեանի անձնուէր աշխատանքներով: Եկեղեցւոյս Հովիւ Տ. Շնորհք Վրդ. Գասպարեանի ծայրագոյն աստիճանի տուչութեան բացառիկ արարողութիւններուն, խումբս իր մասնակցութիւնը բերաւ բազմաձայն երգեցողութիւններով զոր օրուան Ս. Պատարագը մատոյց Թեմիս բարեխնամ Առաջնորդ Տ. Թորգոմ Արք. Մանուկեան:

Ամէն Կիրակի, կանոնաւոր կերպով Ս. Պատարագի երգեցողութիւնները տեղի ունեցան շնորհիւ երաժշտապետին, իր շուրջ ունենալով անձնուէր դրաբապետն ու քանի մը զոհաբերեալ դպիրներ:

Մենք, կը գնահատենք մեր անդամներուն կեանքի դժուարին պայմանները այս երկրին մէջ: Առօրեայ ծանր աշխատանքներէ ու մտահոգութիւններէ վերջ հազիւ կրնան մեկտեղուիլ իրենց ընտանեկան յարկերուն տակ: Այս մտահոգութիւններն առաջնորդուած, վարչութիւնս որոշեց սիրոյ սեղանի վրայ շուրջ հրաւիրել թուր իր անդամները: Այսպէս 12 Սեպտեմբերին, Խաչվերացի Կիրակիին, յաւարտ Ս. Պատարագի Եկեղեցւոյս «Մ. Մանուկեան» սրահին մէջ, նախագահութեամբ Հայր Սուրբին, ծաշկերոյթ մը տրուեցաւ, կարգ

մը անդամներու կողակիցներով ու մեզի համակիր ազգայիններու ներկայութեամբ: Պատեհ առիթ մը նկատեցինք անդամները մեկտեղել նաեւ Հայր Սուրբին քաղաքէս մեկնիլը. այսպէս 28 Հոկտեմբերին Հայր Սուրբին մատուցած հրաժեշտի պատարագէն վերջ եկեղեցւոյս «Գարիպեան» սրահին մէջ, Վարչութեանս նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ ողջերթի սիրոյ սեղան մը, ի ներկայութեան Տ. Յուսիկ Զհնյ. Նշանեանի, Տիսական Խորհուրդէ, ինչպէս նաեւ եկեղեցւոյս յարակից քոյր մարմիններու ներկայացուցիչներուն: Ճաշէն յետոյ, Վարչութեանս ատենապետ Պրն. Վ. Շաքարեան ողջերթի խօսքերով հանդէս եկաւ, որուն յաջորդեցին մարմիններու ներկայացուցիչներու ողջերթի խօսքերը:

Վարչութիւնս այս համեստ պայմաններուն մէջ, խումբը վերանորոգելու, իր անունին վայել դիրքին հասցնելու աշխատեցաւ: Սա ճշմարտութիւն է թէ խումբի մը յաջողութեան գաղտնիքը իր անդամներուն պարկեշտութեան, յարատեւութեան եւ զոհողութեան մէջ կը կայանայ: Մենք մեր կարելին ըրինք. այժմ շրջանը լրանալու վրայ եղող Վարչութիւնս կը մաղթէ որ, նորրոնտիր վարչութիւնը իր շուրջը նուիրեալ, խղճամիտ ու զոհաբեր անդամներով շրջապատուած տեսնէ, եւ նոր յաջողութիւններու առաջնորդէ զայն:

Շնորհակալութիւն եկեղեցւոյս Հոգեւորականաց դասուն, մեզի աջակցութիւն բերող մարմիններուն, մեզի համակիր ժողովուրդին ու մեզի զօրավիգ եղող անդամներուն: Շնորհակալութիւն վարչական ընկերներուն, զոր համերաշխութեամբ զործակցեցան եւ կատարեցին իրենց յանձնուած պարտականութիւնը սիրով ու համբերութեամբ: Մասնաւոր շնորհակալութիւններ՝ խումբիս եւ դասուս ղեկավար Պրն. Գ. Շիրվանեանին, որ ամէն Կիրակի առանց բացակայելու եւ ոչ մէկ ակնկալութեան ղեկավարեց Ս. Պատարագի երգեցողութիւնները իր շուրջ ունենալով դպրապետ Պրն. Կ. Կիրակոսեանն ու պարտաճանաչ դպիրներ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ  
ԿՈՄԻՏԱՍ ԴՊՐԱՑ ԴԱՍ ԵՐԳՉԱՍՈՒՄԲԻ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
 ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՄՇԱԿ. ՅԱՆՁՆԱՅՈՒՄԲԻ  
 ԳՈՐԵՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ  
 1976 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

1976 տարուան ընթացքին Յանձնախումբս կը բաղկանար հետեւեալ անդամներէն.

- |                         |                |
|-------------------------|----------------|
| ՊՐՆ. ՆՈՒՐՉԱՆ ՈՒԶՈՒՆԵԱՆ  | ՝ Ատենապետ     |
| ՊՐՆ. ԿԱՐՕ ՇԱՄԼԵԱՆ       | ՝ Փոխ-ատենապետ |
| ՏԻԿ. ԱՐԱՔՍ ԱՐԹԻՆԵԱՆ     | ՝ Ատենաղալիր   |
| ՏՈՔԹ. ԹԱԳԻՈՐ ԹՈՒՃԵԱՆ    | ՝ Գանձապահ     |
| ՊՐՆ. ԱՐՏԱԽԱԶԳ ՍՏԵՓԱՆԵԱՆ | ՝ Խորհրդական   |
| ՏԻԿ ՍՏԵՓԱՆԵԱՆ           | ՝ Խորհրդական   |
| ՊՐՆ. ՎԱՐՈՒԺԱՆ ՊԱԼԹԱԶԱՐ  | ՝ Խորհրդական   |
| ՊՐՆ. ՌՈՒԲԷՆ ԱՐՍԷՎԷՐ     | ՝ Խորհրդական   |

Այս տարի եւս Յանձնախումբս քալեց իր ծրագրած ուղիէն եւ ունեցաւ մշակութային այլազան ձեռնարկներ:

Տարւոյս առաջին ձեռնարկը եղաւ, պատանեկան երաժշտական ունկնդրութիւն մը, որուն մասնակցեցան կանոնաւոր կերպով դասական երաժշտութեան հետեւող 12 պատանեակներ ու պատանիներ: Այս ունկնդրութեան նպատակն էր ծանօթանալ մեր պատանիներուն երաժշտական տաղանդին:

3 Ապրիլ 1976-ին տեղի ունեցաւ նորայր Արթինեանի դաշնակի համերգը Սալ Գլօտ Շամփայնյի մէջ: Այս ձեռնարկին նպատակն էր, առաջին փորձ մը ընել մղելու մեր հասարակութիւնը, որ ճանչնան ու գնահատեն իրենց մէջ հասած հայ արժէքները, տրուած ըլլալով, որ մեր համայնքին մէջ բացասական երեւոյթ մըն է ընդհանուր առմամբ անտարբեր մնալ հայ արժէքներու նկատմամբ եւ հետաքրքրուիլ անոնցմով միայն այն ատեն, երբ անոնք արդէն համբաւի տիրացած են, եւ այն ալ կամ շահու եւ կամ սնապարծութեան համար:

24 Ապրիլ 1976-ին Ապրիլեան Յուշահանդէսի առնչութեամբ, Յանձնախումբս իր մասնակցութիւնը բերաւ միւս մարմիններու կողքին, կատարուած տօնակատարութեանց ծրագրման եւ իրագործման մէջ:

26 Մայիսին, ծրագրուեցաւ դասախօսութիւն մը նուիրուած Սարգարապատի հերոսամարտին: Օրուան բանախօսն էր Տէր Արտակ Բհնյ. Սիմոնեան, որ Ս. Էջմիածինէն հիւրաբար եկած էր Մոնրէալ:

29 Մայիսին, ունեցանք դարձեալ դասախօսութիւն մը, Պրն. Պերժ ֆազլըեանի կողմէ «Հայ Թատրոնը՝ պատրանք թէ իրականութիւն» նիւթին շուրջ:

3 Հոկտեմբեր 1976-ին, Յանձնախումբս կազմակերպեց «ընդունելութիւն մը ի պատիւ հռչակաւոր ջուրկահար Ռուբէն Ահարոնեանի, որ Գանատա կը գտնուէր համերգային շրջապտոյտի մը համար: Այս ընդունելութեան ներկայ եղան նաեւ իրեն ընկերացող արուեստագէտները: Հրաւիրուած էին զաղութիւն բոլոր մշակութային մարմինները: Երեկոյթը տեղի ունեցաւ ջերմ մթնոլորտի մը մէջ:

16 Հոկտեմբեր 1976-ին, Յանձնախումբս կազմակերպեց ցուցահանդես մը, նուիրուած արժանիքնաբայ նկարիչ՝ Սարգիս Աշմեանի իւղանկարներուն: Բացումը տեղի ունեցաւ վերոյիշեալ Ժուականին եւ տեւեց տասը օր:

Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբը այս տարուան ընթացքին իրագործեց ձեռնարկ մը, որ տաշինն էր իր տեսակին մէջ, Մոնրէալի հայ գաղութին համար: Այն է՝ հայերէն լեզուով մանկական երգերու եւ պատմութիւններու ձայնաերիզներ պատրաստել, մեր սիրող արուեստագէտներու մասնակցութեամբ: Ասոր նպատակն է հայերէնով շրջապատել մեր մանուկները իրենց տանը մէջ, իրենց ժամանցի պահերուն: Յանձնախումբս արամադրեց երկար աշխատանք, յաղթարեւելով թագմաթիւ Թէրնիք ղժուարութիւններու: Ուստի կ'ակնկալենք, որ ծնողներ եւ կազմակերպութիւններ օգտագործեն այս ձայնաերիզները ի շահ մանուկներուն:

Յանձնախումբս այս տարուան ընթացքին եւս մասնաւոր զարկ տուաւ ազգային պատմութեան եւ մշակոյթի վերաբերեալ գիրքերու ցրուումին, համոզուած ըլլալով, որ այս աշխատանքը եւս հայկական մշակոյթի տարածման լաւագոյն միջոցներէն մին է:

Վերջացնելէ առաջ, կ'ուզենք յարգարժան ձեական Խորհուրդի ուշադրութեանը յանձնել ներքնաստրահի թեմի նորոգութեան հարցը: Յանձնախումբս մանրամասն եւ ինամեալ յտակազիծ մը ներկայացուցած էր ձեական Խորհուրդին թագմաթիւ ամիսներ առաջ: Ցարդ որեւէ պատասխան չենք ստացած: Եթէ այդ սրահը պիտի օգտագործուի ի շահ մկեղեցւոյ, փափարելի է, որ այդ նորոգութիւնները կատարուին մօտ ապագային, եւ կ'ակնկալենք, որ ձեական Խորհուրդը դրական քայլ մը առնէ այդ ուղղութեամբ:

Ի դիմաց

ՄԱՄԻՆՈՆՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՉՅԱՆՈՒՄԲԻ  
Ա. ԱՐՄԻՆՅԱՆ  
Ատենադպիր  
Ն. ՈՒԶՈՒՆՅԱՆ  
Ատենապետ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
 ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ  
 ՏԱՐԵԿԱՆ ՆԻԻԹԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ  
 1 9 7 6

Մ Ո Ւ Տ Թ

	<u>31.12.76</u>	<u>31.12.75</u>
Ճաշերէ եւ ուտեստեղէններէ .....	1,967.27	796.40
Անդամավճարներէ .....	237.00	219.00
Նուիրատուութիւններէ .....	180.00	232.00
Դրամատան տոկոսէ .....	67.51	82.74
Տարեկան պագարէ .....	4,231.67	3,570.02
Ջանազաններէ .....	9.70	89.00
Ջրօսապտոյտներէ .....	476.00	659.50
Ամենայն Արքոց տօնակատարութենէ .....	300.39	174.00
<b>Տարուան եկամուտ .....</b>	<b>7,469.54</b>	<b>5,822.66</b>

Ե Լ Թ

Ճաշերու եւ ուտեստեղէններու .....	691.99	593.82
Տարեկան պագարի .....	1,409.06	1,083.11
Ջանազաններու .....	187.54	627.45
Խոհանոցի պիտոյքներու .....	689.03	-----
Նրուսաղէմի որդեգրուած սանի .....	50.00	20.81
Ամենայն Արքոց տօնակատարութեան .....	62.96	-----
Ջրօսապտոյտներու .....	362.50	513.25
Ծխական Խորհուրդոյ .....	5,000.00	4,000.00
<b>Ելքի առաւել. ի դէմ մուտքի .....</b>	<b>8,453.08</b>	<b>6,838.44</b>
Պատրաստ գումար Յուն. 1-ին .....	983.54	1,015.78
Պատրաստ գումար Դեկ. 31-ին .....	3,518.63	4,534.41
Պատրաստ գումար Դեկ. 31-ին .....	2,535.09	3,518.63

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՑ  
 ԿՈՄԻՏԱՍ ԴՊՐԱՑ ԴԱՍՈՒ  
 ՏԱՐԵԿԱՆ ՆԻՒԹԱԿԱՆ ՀԱՇՈՒՇՏՈՒՈՒԹԻՒՆ  
 1 9 7 6

Մ Ո Ւ Տ Ք

	<u>31.12.76</u>	<u>31.12.75</u>
Եկեղեցւոյ պնակի հստոյթներէ .....	704.96	832.56
Նուիրատուութիւններէ .....	440.00	178.00
Դրամատան տոկոսէ .....	24.79	33.52
	<u>1,169.75</u>	<u>1,044.08</u>

Տարուան եկամուտ

Ե Լ Ք

Ջանազան ծախսերու եւ պատուասիրութիւն .554.41	.....	279.61
Փոխանցում Պարտքի Շիջման մարմնի.....	----	500.00
Փոխանցում Եխական Խորհուրդի .....	1,000.00	1,500.00
	<u>1,554.41</u>	<u>2,279.61</u>
Ելքի առաւելութիւն ի դէմ մուտքի ...	384.66	1,235.53
Պատրաստ գումար Յունուար 1-ին .....	<u>892.64</u>	<u>2,128.17</u>
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	507.98	892.64

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
 ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՄՇԱԿ. ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻ  
 ՏԱՐԵԿԱՆ ՆԻԻԹԱԿԱՆ ՀԱՇՈՒՅՏՈՒՈՒԹԻՒՆ  
 1 9 7 6

Մ Ո Ւ Տ Ք

	<u>31.12.76</u>		<u>31.12.75</u>
Նուիրատուութիւններէ .....	125.00	.....	130.00
Վաճառուած գիրքերէ .....	2,409.00	)	
Վաճառուած ձայնալսկներէ .....	125.00	)	2,257.55
Վաճառուած ձայնաերիզներէ .....	240.00	)	
Վաճառուած քարթերէ .....	45.00	.....	----
Նորայր Արթինեանի դաշնակի համերգէն ..	1,246.00	.....	-----
Ներկայացումէ եւ զանազան ձեռնարկներէ ..	----	.....	1,160.00
<b>Տարուան եկամուտ</b>	<u>4,190.00</u>	.....	<u>3,547.55</u>

Ե Լ Ք

Գիրքերու գնումի .....	1,991.78	)	
Ձայնալսկներու գնումի .....	33.00	)	1,560.25
Ձայնաերիզներու .....	140.00		-----
Մ. Արթինեանի համերգի ծախսերու .....	635.00		-----
Զանազանքի .....	191.19	.....	282.10
Ելական Խորհուրդոյ փոխանցուած .....	900.00	.....	700.00
Նուիրատուութիւն Եկեղեցւոյ տարեդ. ....	100.00	.....	----
Պարտքի ՇԼԶման Մարմնի փոխանցուած .....	----	.....	300.00
	<u>3,990.97</u>	.....	<u>2,842.35</u>
Մուտքի առաւելութիւն ի դէմ ելքի .....	199.03	.....	705.20
Պատրաստ գումար Յունուար 1-ին .....	1,789.96	.....	1,084.76
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին .....	<u>1,988.99</u>	.....	<u>1,789.96</u>

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻԶ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
 ՊԱՐՏՔԻ ՇԻՂՄԱՆ ՄԱՐՄՆԻ  
 ՏԱՐԵԿԱՆ ՆԻՒԹԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ  
 1 9 7 6

Մ Ո Ւ Տ Ք

	<u>31.12.76</u>	<u>31.12.75</u>
Պարահանդէսի Յանձնախումբէ .....	8,000.00 .....	3,500.00
«ԻԼՆԱՅՉՐԻՍ ԶՐՐԸ» տարեկան վարձքէ .....	4,000.00 .....	4,500.00
Անդամատուրքերէ եւ նուիրատուութիւն. ...	6,750.00 .....	6,410.00
Դրամատան տոկոսէ .....	2,067.57 .....	1,891.18
Կոմիտաս Դպրաց Դասէ .....	----- .....	500.00
Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբէ .....	300.00 .....	300.00
Վճանրի Պուրասա, հողի գուտ եկամուտ ...	16,700.00 .....	-----
Տարուան եկամուտ .....	<u>37,817.57</u> .....	<u>17,101.18</u>

Շ Լ Ք

Կալուածի պարտքի վճարումի .....	12,500.00 .....	12,500.00
Կալուածի պարտքի տոկոսի .....	5,078.13 .....	5,890.63
Դրամատան ծախսերու .....	3.00 .....	2.00
ՆԽ. Խորհուրդոյ փոխանցուած անդամատ. ...	1,000.00 .....	1,000.00
Վճանրի Պուրասա, հողի տուրքի .....	---- .....	602.75
	<u>18,581.13</u> .....	<u>19,995.38</u>
Մուտքի առաւելութիւն ի դէմ ելքի .....	19,236.44 .....	-----
Ելքի առաւելութիւն ի դէմ մուտքի .....	----- .....	2,894.20
Պատրաստ գումար Յուն. 1-ին .....	23,108.16 .....	26,002.36
Պատրաստ գումար Դեկ. 31-ին .....	<u>42,344.60</u> .....	<u>23,108.16</u>

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՑ  
 ԵԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴՈՅ  
 ՏԱՐԵԿԱՆ ՆԻՒԹԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ  
 1 9 7 6

Մ Ո Ւ Տ Զ

	<u>31.12.76</u>	<u>31.12.75</u>
Եկեղեցւոյ պնակէ .....	10,753.00 .....	8,903.75
Եկեղեցւոյ կալուածէն .....	4,352.00 .....	2,465.00
„          „          Հ.Բ.Ը.Մ. ....	1,500.00 .....	1,000.00
„Բուրաստան„ ամսաթերթէ .....	3,555.00 .....	2,718.50
Շաբաթօրեայ վարժարանէ .....	7,521.00 .....	7,126.25
Խորհրդակատարութիւններէ .....	4,855.00 .....	8,022.00
Անդամավճարներէ .....	1,313.00 .....	729.00
„ Շիջման Յանձ. փոխանձ. ....	1,000.00 .....	1,000.00
Նուիրատուութիւններէ .....	21,362.00 .....	14,186.06
„Իւղազին„ նուիրատուութիւններէ .....	5,686.00 .....	4,502.00
Պատի օրացոյցէ .....	2,143.50 .....	1,149.00
Դրամատան տոկոսէ .....	4,621.53 .....	182.43
Գործունէութիւններէ .....	----- .....	2,929.89
Եկեղեցւոյ տարեդարձէ .....	6,542.02 .....	-----
Շաբաթօրեայի ձեռնարկէ .....	2,185.00 .....	-----
Զատկուայ հաւկիթներէ .....	2,282.50 .....	2,500.00
Ապրիլեան տօնակատարութենէ .....	311.00 .....	-----
Պարահանդէսի Յանձնախումբէ .....	7,000.00 .....	4,000.00
Տիկնանց Միութենէ .....	5,000.00 .....	4,000.00
Դպրաց Դաս Վարչութենէ .....	1,000.00 .....	1,500.00
Մամիկոնեան Մշակ. Յանձ.է .....	900.00 .....	700.00
Երիտասարդաց Յանձ.է .....	200.00 .....	500.00
Հողի վաճառման զուտ մուտքէ .....	51,700.00 .....	-----
Պոլսոյ Պատրիարք. պահեստի .....	----- .....	200.00
	<u>145,782.55</u>	<u>65,853.88</u>

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
 ԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ  
 Տարեկան նիւթական հաշուետուութիւն  
 1 9 7 6

Ե Լ Ք

	<u>31.12.76</u>	<u>31.12.75</u>
Եկեղ. ընդհ. ծախս եւ պաշտօնէութիւն .....	21,980.59	20,712.61
<u>Եկեղեցւոյ կալուածին`</u>		
Պահպանութեան .....	17,770.53	21,239.95
Բարեգարդարման .....	13,047.72	-----
„Բուրաստան„ ամսաթերթի .....	5,163.47	4,508.63
Շաքաթօրեայ վարժարանի .....	8,747.50	7,789.23
Պատի օրացոյցի .....	2,688.00	1,560.00
Խորհրդակատարութեանց .....	-----	3,071.00
Գրասենեակային ծախքի .....	2,415.69	2,927.66
Դրամատան ծախքի .....	-----	25.95
Զանազան գործ. եւ ընդունելութիւններու ....	1,090.52	-----
Առաջնորդարանի տուրք ի նիւ Եորք .....	10,227.10	5,093.00
Առաջ. Փոխ. տուրք ի Թորոնթօ .....	750.00	700.00
Փոխառութեան վճարում Հ.Բ.Ը.Մ. ....	35,000.00	-----
Փոխանցում Շիջման Յանձ.ի .....	16,700.00	-----
Պոլսոյ Պատրիարքարանի .....	-----	5,558.50
	<u>135,581.12</u>	<u>73,186.53</u>
Մուտքի առաւելութիւն ի դէմ ելքի .....	10,201.43	
Ելքի առաւելութիւն ի դէմ մուտքի .....		7,332.65
Պատրաստ գումար		
Յունուար 1-ին .....	<u>3,374.35</u>	<u>10,707.00</u>
Դեկտեմբեր 31-ին .....	13,575.78	3,374.35

**Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ ԵԿԵՂԵՑԻՈՅ**  
**Հ Ա Շ Ո Ւ Ե Յ Ա Ր Դ Ա Ր**  
**Յ 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1976**

**ԸՆԹԱՑԻԿ ԻՆՉՔ**

Պատրաստ գումար	Հիմնադրամի	42,344.60	
	Եկեղեց. Տիկնանց	2,535.09	
	Դպրաց Դաս	507.98	
	Մամիկոնեան Մշակ.	1,988.99	
	Պարահանդեսի Ցանձ. (76)	10,542.29	
	Պարահանդեսի Ցանձ. (75)	1,475.29	
	Ժխական Խորհուրդ	13,575.78	
			<u>72,970.02</u>

**ԳԱՆՉՈՒՆԵԼԻՔ ՎԱՐՉՔԵՐ** . . . . . 1,740.00

**ՀՈՂ ԵՆ ԿԱԼՈՒԱԾ (Գնման գինով)**

Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցի	250,000.00	
Ցաւելում	<u>14,945.00</u>	264,945.00
	<b>Գ Ո Ւ Մ Ա Ր</b>	<u><u>339,655.02</u></u>

**ՊԱՐՏՔ ԵՆ ԶՈՒՏ ԱՐԺԷՔ**

**ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏՔԵՐ**

Եկեղ. տարեկան	12,500.00	
Ընթացիկ պարտքեր 76 մնացած	<u>3,600.00</u>	16,100.00

**ԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐՏՔ**

Եկեղեց. վճարում 6.5 տոկոս	. . . . .	<u>56,250.00</u>
	<b>Գ Ո Ւ Մ Ա Ր</b>	<u><u>72,350.00</u></u>

**ԶՈՒՏ ԱՐԺԷՔ**

Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցի	. . . . .	<u><u>267,305.02</u></u>
---------------------------	-----------	--------------------------

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՃԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Ի

1 9 7 7

Մ Ո Ւ Տ Ք

	1976 կատար.	1977 նախահաշիւ
Իմանիկի ի ձեռին .....	3,374	13,576
Եկեղեցւոյ պնակէ .....	10,753	11,000
Եկեղեցւոյ կալուածէն .....		
"          "    Հ.Բ.Ը.Մ.է .....	1,500	3,100
«Բուրաստան» ամսաթերթի .....	3,555	4,000
Շաբաթօրեայ վարժարանի .....	7,521	7,000
Խորհրդակատարութեան .....	4,855	5,000
Անդամավճարներէ .....	2,313	3,000
Սուկրատուութիւններէ .....	21,362	18,000
"    իւղազինէ .....	5,686	6,000
Պատի օրացոյցէ .....	2,143	----
Դրամատան տոկոսէ .....	4,622	----
Գործունէութիւններէ .....	11,321	6,000
Մարմիններէ .....	14,100	12,000
Հողի վաճառքէ .....	51,700	----
	<u>149,157</u>	<u>93,176</u>

Ե Լ Ք

Եկեղեց- ընդհ. ծախս եւ պաշտենէութեան ....	21,981	24,500
Եկեղեցւոյ կալուածին՝		
Պահպանութեան .....	13,520	15,000
Բարեգարդարման .....	17,298	20,000
«Բուրաստան» ամսաթերթի .....	5,163	5,500
Շաբաթօրեայ վարժարանի .....	8,748	9,000
Պատի օրացոյցի .....	2,688	----
Գրասենեակային ծախսերու .....	2,416	2,700
Զանազան գործունէութեանց .....	1,090	1,500
Առաջնորդարանի տուրք ի նիւ Եորք .....	10,227	10,800
Առաջ. Փոխ. տուրք ի Թորոնթօ .....	750	1,400
Պարտքի վճարում .....	35,000	----
Նշխման մարմնի .....	16,700	----
	<u>135,581</u>	<u>90,400</u>
Պատրաստ գումար Դեկտ. 31-ին	13,576	2,776